քը: Երեւակայիր, այդ քոսոտը, որ մատնել է...

Պատմում է: Իժերը սողում են բարոյական խաւարի մէջ:

Նենգութիւն, նախանձ, սուտ եւ կեղծաւորութիւն:

* * *

Վախկոտ են վերին աստիճանի:

Իրական ուժի առջեւ դողում են, ժպիտը երեսին սողոսկում, խարում, յարմարւում:

Վտանգի սաւառնող թեւերի առջեւ հաւերի նման թռչկոտելով բոյն են վազում: Միւս օրը իրենց ոխը թափում են անմեղների գլխին, որպէսզի ուժի պատրանքը ստեղծեն:

Զեղոք վարժապետի դէմ առիւծ են դառնում: Փոքրիկ Համիաներ: Կծու, անողոք, անբարեխիղճ:

Միանում են: Ամէն տեղ թշնամի են տեսնում:

Զառում են:

* * *

Առաւօտ եւ երեկոյ, ծիծեռնակները գնում են անհունը փնտռելու, իսկ տեղիմը բերում է մի նոր անկետ

Ու պրպտում անցեալը՝ ստորակէտ
Ու պրպտում ներկայ՝ վերջակէտ:

Սիրտս դրել եմ ապակիէ շիշի մէջ,
Ինչպէս հարցական մի նշան,
Ինչպէս ուրուական մի կարմիր,
Կոպերատիվի խանութում կախուած՝
Ինչպէս
Եզան միս արիւնած —
Սիրտս տուել եմ դանակին բթածայր:
Եւ վաղը՝ զոման օր —
Սեւ օրօր
Երգ ու մեռելոց
Գոց դրան ետեւ
Աներաղ թատրոնում պետական...

Սեփականութի՞ւն —
Ոչ մի, ոչ մի, ոչ մի
17-ից առա՞ջ —
Բանտ, երաշ.
Փարիզ, Պոլիս՝ սպանուած նոխազ
Ոտքիս տակ: Մի կին, կտոր մի հաց —
Մղձաւանջ:
Պաշտօ՞ն՝ ոչ մի:
Լսում էի պտտող աշխարհին,
Ու գնացքը պատմութեան
Վազում էր ռումբի դէմ,
Մինչ Հայաստանից
Ծիծեռնակը չէր վերադառնում:
Գումար = թշուառութիւն:
Բրիւսէլում, Բուլվար Անսպախ, Խաչուեց Յիսուս.
Պոլսում՝ պոռնիկներ տաճար մտան.
Այստեղ՝ Թարխանեան փողոցում նեղ՝
Ապոկալիպսը գլուխը զարկաւ ժայռին
Եւ Արագածը ձիւնէ ոտքերով մտան եկաւ:

Այլեւս
Ոչ մի, ոչ մի, ոչ մի
Պատրանք, ոչ մի յոյս: Բա՛նտ:
Հիմա՞ —
Ընկերներ, հիմա՝
«Պրոլետարիատի ծառայ»,
Սիրտս շիշի մէջ
Ահա —
Առէ՛ք կերէք,
Այս է մարմին բանաստեղծի:

* * *

Թողնենք բանաստեղծների դիւրագրգիռ զգայնութիւնը եւ անցնենք անմիջապէս երաժիշտներին:

Ամբողջ երաժշտութիւնը տակնուվրայ է:

Սերաստիան Բախը մեծ դուքսի առջեւ անհանգիստ շուքի նման գալարւում է. Բէթհովէնը լսողութիւնը սրել է եւ այլեւս ամէն ինչ լսում է. իսկ Պետական Երաժշտանոցի տեսուչը՝ Ղզլարից եկած առատախօս այս Տարտարէնը՝ տասը օր, տասը գիշեր, ոտքի վրայ, նա էլ հիւանդ ոտքի վրայ, հսկում է սենեակների մաքրութեան:

Յայտնի է, որ երաժշտութիւնը մեծ կապ ունի նաւթի եւ մեղրամոմի հետ: Տախտայատակը չփելու ժամանակ ձեռքերը պէտք է շարժուին ձայների լայն հոսանքների նման, դուրս ցատկեցնելով մաքրամաքուր մեղեդին ու դուրս վանելով աղտ, ոջիլ, ցեխ՝ ժողովրդական ամէն մի դպրոցի անհրաժեշտ ստորոգելիները: Ցետոյ, երկու կտոր բուրդի վրայ, մեղ-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան